Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 Օգոստոսի 2020թ. ք. Արթիկ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի Արթիկի բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ Հայկ Դարբինյանս քննության առնելով թիվ 05788425, թիվ 05874611 և թիվ 05981610 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.01.2020թ. տրված թիվ ՇԴ/2284/02/19 կատարողական թերթի համաձայն 16.01.2020թ. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արթիկի բաժանմունքում հարուցվել է թիվ 05788425 կատարողական վարույթը, որի համաձայն պետք է Հովհաննես Արտաշի Ղազարյանից, Մարյամ Ֆերդինանտի Հարությունյանից և Մարիամ Արտաշի Ղազարյանից համապարտության կարգով հօգուտ <<Արեգակ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 303.794 ՀՀ դրամ և հավելագրվող բանկային տոկոսագումարներ:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 03.02.2020թ. տրված թիվ ՇԴ/2446/02/19 կատարողական թերթի համաձայն 05.02.2020թ. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արթիկի բաժանմունքում հարուցվել է թիվ 05874611 կատարողական վարույթը, որի համաձայն պետք է Հովհաննես Արտաշի Ղազարյանից և Մարիամ Արտաշի Ղազարյանից համապարտության կարգով հօգուտ <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 379.695 ՀՀ դրամ և հավելագրվող բանկային տոկոսագումարներ:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 06.03.2020թ. տրված թիվ ՇԴ/2432/02/19 կատարողական թերթի համաձայն 12.03.2020թ. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արթիկի բաժանմունքում հարուցվել է թիվ 05981610 կատարողական վարույթը, որի համաձայն պետք է Հովհաննես Արտաշի Ղազարյանից հօգուտ <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 610.226 ՀՀ դրամ և հավելագրվող բանկային տոկոսագումարներ:

Պարտապաններից անհրաժեշտ է բռնագանձել նաև բռնագանձվող գումարների 5 / հինգ / տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսերի գումարներ:

21.04.2020թ. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի Արթիկի բաժանմունք է մուտքագրվել <<Արմէքսպերտիզա>> ՍՊԸ-ի փորձագիտական եզրակացությունը, որով պարտապան Հովհաննես Արտաշի Ղազարյանին պատկանող VAZ 21099 մակնիշի 34 MZ 138 պետհամարանիշի 2004 թվականի արտադրության ավտոմեքենան գնահատվել է 828.000 ՀՀ դրամ: